

Ի Թ

ՀԱՅ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՍԸ ԾԱԳՈՒՍԸ

ՄԱՐ-ՍԱԲԱՅԻ ՎԱՆՔԻՆ ՄԷՋ

1. Մար-Սարայի վանքին տեղագրութիւնը .

Մեր պատմագրական աշխատանքներուն առիթով ծանօթացած էինք որ, ի հնունն, Մար-Սարայի վանքին մէջ գոյութիւն ունեցած է Հայ Մխարանութիւն մը: Այս մասին մեր պատմական տեղեկութիւններն ու յիշատակարանները հաղորդելէ յառաջ, փափաքեցանք գաղափար մը կազմել այդ վանքին մասին, տեղագրական և պատմական տեսակէտով. ուստի, այս նպատակաւ սեպտ. 23ին, Բեթղեհէմի մեր տեսուչ Տ. Աշոտ վրդ. ի (այժմ հանգուցեալ) և տեղւոյն ուսուցիչ Պ. Յակոբի հետ, դէպ ի Մար-Սարա ճամբորդութիւն մը ուղեցինք կատարել: Բեթղեհէմէն երկուքուկէս ժամ պէտք էր ձիով ճամբորդել դժուարին ճանապարհէ մը, որուն անընդհատ ելուէջները մինչեւ Մար-Սարա, ճամբորդի մը համար բաւական յոգնեցուցիչ էին: Մար-Սարա, Բեթղեհէմէն դէպ ի արեւելք, 2.30 ժամ հեռաւորութեան ունի, Մեռեալ Ծովէն ալ, դէպ ի արեւմուտք 1.30 ժամ: Որոշեալ ժամուն հասանք Մար-Սարա, որուն համառօտ տեղագրականը ընելէ յառաջ, պէտք է որ անոր հիմնադրին նկատմամբ քանի մը պատմական տեղեկութիւններ տանք: Մար-Սարա կապաղովկիացի էր, ծնած է 439ին, և Երուսաղէմ եկած է 456ին, երիտասարդութեան սկիզբը. քիչ ժամանակ ետքը կը ներկայանայ համբաւաւոր անապատական Եւթիմիոսի և անոր յանձնարարութեամբ կը մտնէ Թէոկտիտոսի մերձակայ վանքը և կը հաստատուի հոն: Մար-Սարայի կենսագրութիւնը 556ին գրած է իր աշակերտը, Սկիւթուպոլսեցի Կիւրեղ կրօնաւոր: Սկիւթուպոլսեցին ստուգապատում պատմիչն է Երուսաղէմի Մեծ-Անապատին այն հոյակապ վանականաց, որ Դ. և Ե. դարերուն